Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու
2023թ. նոյեմբերի 29-ի N 176-Ա որոշման

Համայնքի ղեկավար՝
Գ.Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴՈՒ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. **Քաղաքաշինության և հողաշինության բաժին**
2. **Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին**
3. **Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին**
4. **Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին**
5. **Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և առողջապահության բաժին**
6. **Քարտուղարության և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին**

Հավելված 2
ՀՀ Արարատի մարզի
Վեդի համայնքի ավագանու
2023թ. նոյեմբերի 29-ի N 176-Ա որոշման

Համայնքի ղեկավար
Գ.Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 165

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	590000		590000
2.	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	460000		460000
3.	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	420000		840000
	Ընդամենը	*4*			*1890000*
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
4.	Համայնքի ղեկավարի խորհրդական	2	300000		600000
5.	Համայնքի ղեկավարի օգնական	1	270000		270000
6.	Համայնքի ղեկավարի օգնական	2	230000		460000
7.	Խմբակցության փորձագետ	2	150000		300000
	Ընդամենը	*7*			*1630000*
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
8.	Վարչական ղեկավար՝ /մինչև 1000 բնակիչ/ Նոր Ուղի գյուղ, Գինեվետ գյուղ, Դաշտաքար գյուղ, Շաղափ գյուղ, Լանջանիստ գյուղ, Լուսաշող գյուղ	6	270000		1620000

9.	Վարչական ղեկավար՝/1001-3000 բնակիչ/ Լուսառատ գյուղ, Եղեգնավան գյուղ, Վանաշեն գյուղ, Նոր Կյանք գյուղ, Արալեզ գյուղ, Սիսավան գյուղ, Գոռավան գյուղ,	7	320000		2240000
10.	Վարչական ղեկավար՝/3001-ից ավելի բնակիչ/ Ոսկետափ գյուղ, Այգավան գյուղ, Տափերական գյուղ, Փոքր Վեդի գյուղ, Ուրցաձոր գյուղ	5	350000		1750000
	Ընդամենը	*18*			*5610000*
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
11.	Աշխատակազմի քարտուղար	1	450000		450000
12.	Գլխավոր մասնագետ (կոմունալ տնտեսության և տրանսպորտի գծով)	1	290000		290000
13.	Գլխավոր մասնագետ (սոցիալական աշխատող)	1	290000		290000
14.	Գլխավոր մասնագետ (զորահավաքի և զորակոչի գծով)	1	290000		290000
15.	Գլխավոր մասնագետ (զարգացման ծրագրերի և ներդումների գծով)	1	290000		290000
16.	Գլխավոր մասնագետ (իրավախորհրդատու)	1	290000		290000
17.	Գլխավոր մասնագետ (ՔԿԱԳ)	1	166500		166500
18.	Առաջատար մասնագետ (ՔԿԱԳ)	1	156500		156500
19.	Առաջատար մասնագետ (սոցիալական աշխատող)	1	220000		220000
20	Առաջատար մասնագետ (անձնակազմի կառավարման գծով)	1	220000		220000
21.	Առաջին կարգի մասնագետ (սոցիալական աշխատող)	1	170000		170000
	Ընդամենը	*11*			*2833000*
	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ				
22.	Բաժնի պետ	1	350000		350000
23.	Գլխավոր մասնագետ	2	290000		580000
24.	Առաջատար մասնագետ	4	220000		880000
	Ընդամենը	*7*			*1810000*
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ				
25.	Բաժնի պետ	1	350000		350000
26.	Գլխավոր մասնագետ	2	290000		580000
27.	Առաջատար մասնագետ	2	220000		440000
28.	Առաջին կարգի մասնագետ	1	170000		170000
	Ընդամենը	*6*			*1540000*
	ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ				
29.	Բաժնի պետ	1	350000		350000
30.	Գլխավոր մասնագետ- գլխավոր հաշվապահ	1	290000		290000

31.	Գլխավոր մասնագետ (գնումների գծով)	1	290000		290000
32.	Առաջատար մասնագետ (ֆինանսների գծով)	2	220000		440000
33.	Առաջատար մասնագետ (գնումների գծով)	2	220000		440000
	Ընդամենը	*7*			*1810000*
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ				
34.	Բաժնի պետ	1	350000		350000
35.	Գլխավոր մասնագետ	3	290000		580000
36.	Առաջատար մասնագետ	2	220000		440000
37.	Առաջին կարգի մասնագետ	2	170000		340000
	Ընդամենը	*8*			*1710000*
	ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ				
38.	Բաժնի պետ	1	350000		350000
39.	Գլխավոր մասնագետ	2	290000		580000
40.	Առաջատար մասնագետ	2	220000		440000
	Ընդամենը	*5*			*1370000*
	ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺԻՆ				
41.	Բաժնի պետ	1	350000		350000
42.	Գլխավոր մասնագետ (Ոսկետափ բնակավայր)	1	290000		290000
43.	Գլխավոր մասնագետ (ՔՍԳ)	1	290000		290000
44.	Առաջատար մասնագետ	12	220000		2640000
45.	Առաջին կարգի մասնագետ (բնակավայրերի)	18	170000		3060000
	Ընդամենը	*33*			*6630000*
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
46.	Գործավար (համայնքի ղեկավարի և տեղակալների)	2	180000		360000
47.	Օգնական (աշխատակազմի քարտուղարի)	1	220000		220000
48.	Խմբակցության գործավար	2	120000		240000
49.	Վարորդ	3	150000		450000
50.	Տնտեսվար	1	150000		150000
51.	Օժանդակ բանվոր	1	120000		120000
52.	Պահակ	1	105000		105000
53.	Հավաքարար	21	105000		2100000
54.	Հնոցապան (ջեռուցման սեզոնի համար)	1	105000		105000
55.	Գերեզմանատան տեղամասի համակարգող (Վեդի)	1	105000		105000
	Ընդամենը	34			3955000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				

56.	Ցանցային ադմինիստրատոր	1	200000		200000
57.	Տեսալուսանկարահանող օպերատոր	1	150000		150000
58.	Անասնաբույժ	5	120000		600000
59.	Գործավար-օպերատոր (բնակավայրերի)	18	120000		2160000
	Ընդամենը	25			3110000
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	165			33898000

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՁԱՓԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎԾԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 202-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագիծը մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածների,«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան:

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել Վեդու համայնքապետարանի 2023 թվականի անցած 11 ամիսների աշխատանքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպես նաև համայնքի առջև ծառացած մարտահրավերներն ու խնդիրները արդյունավետ լուծելու անհրաժեշտությունը:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են 2022 թվականի դեկտեմբեր ամսին: Հարկ է նշել, որ անցած 11 ամիսների ընթացքում Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարած աշխատանքների որակական և քանակական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կառուցվածքային առանձին ստորաբաժանումներ կարիք ունեն համալրման, իսկ որոշները՝ վերակազմակերպման և կրճատման:

Այսպես՝

1) 2023 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Աշխատակազմ է մուտքագրվել շուրջ 8750 դիմում և գրություն՝ քաղաքացիներից, պետական և տարածքային կառավարման, ինչպես նաև այլ մարմիններից: Դրանց գերակշիռ մեծամասնությունը վերաբերվում է աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից իրականացվող գործառույթներին: Ընդ որում, համայնքի անշարժ գույքի և ենթակառուցվածքների ընթացիկ կառավարման գործառույթներն անհամեմատ ավելի աշխատատար են և սերտորեն կապված են ինչպես ընթացիկ սուբվենցիոն և զարգացման ծրագրավորման, այնպես էլ այլ նմանատիպ ծրագրերի հետ: Նախորդ տարվա համեմատ, այս տարվա ընթացքում իրականացված վարչարարությունների արդյունքում զգալիորեն նվազել են համայնքի տարածքում քաղաքաշինական նորմերի խախտումներով կատարված շինությունները, որոնց տեղազննման, ինչպես նաև համապատասխան վարչարարության իրականացումը հնարավոր է եղել ամենօրյա հետևողական աշխատանքների արդյունքում, չնայած բաժնում առկա հաստիքների մի մասի համալրված լինելու պարագայում: Նշված խնդիրների նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով 2023 թվականի հաստիքացուցակով բաժինը համալրվել էր ևս 1 համայնքային ծառայության պաշտոնով (գլխավոր մասնագետ) (ծածկագիր՝ 2.3-1), սակայն վերջինիս համալրման նպատակով աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթների արդյունքում մասնակցության վերաբերյալ դիմումներ չեն ներկայացվել, ինչը մեր կարծիքով պայմանավորված է նաև տվյալ համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված չափորոշիչներին չբավարելու հանգամանքով (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային ստաժ և համապատասխան բնագավառի փորձ):
2) Վեդի համայնքի խոշորացման փաստով պայմանավորված 2023 թվականին ՀՀ կառավարություն է ներկայացվել թվով 12 սուբվենցիոն ծրագիր, որոնք հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից: Չնայած դրան, 2023 թվականի համար հաստատված սուբվենցիոն ծրագրերի մի մասի կատարումը տեղափոխվել և գումարվել է 2024 թվականի համար նախատեսված սուբվենցիոն ծրագրերին, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացրել նշված ծրագրերի մասով գնումների գործընթացի կազմակերպման և դրանց ֆինանսական մասի արդյունավետ կազմակերպման համար:

   Աշխատակազմի գործող հաստիքացուցակով (2023թ-ի համար հաստատված) Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժինները գործել են որպես առանձին ստորաբաժանումներ (բաժիններ), սակայն 2023 թվականի 11 ամիսները ցույց տվեցին, որ վերը նշված

սուբվենցիոն, այլ ծրագրերի գնումների և դրանց ֆինանսական մասի գործընթացները արդյունավետ կարող են կազմակերպվել մեկ ստորաբաժանման շրջանակներում:

Հետևաբար, համայնքին վերապահված գործառույթների բազմազանությունը, ինչպես նաև **ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի** առանձին գործառույթների պատշաճ իրականացումը պահանջում է դրանց միավորում կառուցվածքային նոր միավորի՝ **Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի,** որի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական գործունեությունը և գնումների կազմակերպումը:

Բացի այդ, խոշորացումից հետո Վեդի համայնքի ենթակայության տակ են անցել միավորված 17 բնակավայրերի նախադպրոցական կրթական, ինչպես նաև մշակութային (մշակույթի տներ, արվեստի, երաժշտական դպրոցներ և գրադարաններ) հաստատություններ, որոնց ընթացիկ գնումները 2023 թվականից համակարգվում է (իրականացնել) Աշխատակազմի գնումների բաժնի կողմից, իսկ ֆինանսական մասի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից, որը լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում նշված 2 բաժինների համատեղ աշխատանքի կազմակերպման համար, մասնավորապես, գնումների պլանավորման և ֆինանսավորման մասով:

3) Աշխատակազմում աճել են դատական կարգով ներկայացված տարաբնույթ հայցապահանջների թվաքանակը, որոնք պայմանավորված են ինչպես խոշորացման արդյունքում Վեդի համայնքի կազմում ընդգրկված նախկին գյուղական համայնքների նկատմամբ ներկայացված, այնպես էլ համայնքի կողմից իրականացվող վարչական վարույթների վերաբերյալ ընդունված վարչական ակտերի դեմ ներկայացվող հայցադիմումների հետ, որոնց մասով համայնքի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դատական մարմիններում հնարավոր չէ ապահովել բաժնի աշխատակիցների միջոցով: Առաջարկվող նախագծով նախատեսվում է իրավաբանական բաժնի՝ որպես աշխատակազմի առանձին ստորաբաժանման կրճատում, փոխարենը աշխատակազմում նախատեսվում են համապատասխան հաստիքներ, որոնցով կիրականացվի աշխատակազմի իրավական ապահովման գործառույթների մի մասի կատարումը, իսկ տնտեսված միջոցների (շուրջ՝ 6,1 մլն. դրամ) հաշվին նախատեսվում է համայնքի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դատական մարմիններում կազմակերպել մրցութային կարգով՝ իրավաբանական ծառայություններ մատուցող պրոֆեսիոնալ մասնագետների (փաստաբանների) միջոցով: Իսկ բաժնի կրճատված հաստիքները զբաղեցնող աշխատակիցներին կառաջարկվի իրենց մասնագիտությանը և որակավորմանը համապատասխանող աշխատանք:

4) Աշխատակազմի ներկայացվող նոր կառուցվածքում **Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի սպասարկման և գովազդի բաժնի (այսուհետ՝ Բաժին)** որպես առանձին ստորաբաժանում ներառված չլինելը պայմանավորված է 2023թթ. ընթացքում բաժնի կողմից կատարված աշխատանքների կատարողականի արդյունքներով, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ բաժնի գործառույթների հիմնական մասի կատարումը պայմանավորված է սուբվենցիոն ծրագրերի հայտերի կազմման աշխատանքների հետ, որը մեծամասամբ իրականացվում է աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի հետ, ինչպես նաև Բաժնի կողմից իրականացվող այնպիսի գործառույթների հետ, որոնք ավելի շատ հանդիսանում են Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գործառույթներ, մասնավորապես, համայնքի ավագանու կողմից հաստատված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաշվարկում և գանձում, ինչպես նաև առևտրի ոլորտում համապատասխան թույլտվությունների տրամադրում և դրանց կատարման նկատմամբ վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացում, որը հնարավոր է ավելի արդյունավետ կազմակերպել Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գործառույթների շրջանակներում: Ուստի նախատեսվող փոփոխություններով Բաժնում առկա համայնքային ծառայության պաշտոնների կրճատման հետևանքով այդ պաշտոնները զբաղեցնող համապատասխան աշխատակիցներին կառաջարկվի իրենց մասնագիտությանը և որակավորմանը համապատասխանող աշխատանք:

5) Համայնքի խոշորացման փաստով պայմանավորված 2022-2023թթ. համայնքի կազմում ընդգրկված Ոսկետափ, Այգավան, Տափերական, Փոքր Վեդի և Ուրցաձոր բնակավայրերի վարչական ղեկավարների աշխատակազմերում Քարտուղարության և SS բաժնում նախատեսվել են գլխավոր մասնագետի համայնքային ծառայության պաշտոններ (յուրաքանչյուր բնակավայրում 1-ական)

(ծածկագիր՝ 2.3-18, 2.3-19, 2.3-20, 2.3-21), սակայն 2023 թվականի ընթացքում իրականացված շրջայցերի և նշված բնակավայրերի աշխատակազմերի գործառույթների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզվել է, որ ի տարբերություն աշխատակազմի (կենտրոնական ապարատ) մյուս գլխավոր մասնագետների, վարչական ղեկավարի աշխատակազմերում առկա գլխավոր մասնագետների պաշտոնները զբաղեցնող անձինք աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության մասով կրում են ավելի նվազ ծանրաբեռնվածություն և պատասխանատվություն, քան աշխատակազմի միևնույն խմբի նույն ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողները, հետևաբար վերը նշված բնակավայրերում (բացառությամբ՝ Ոսկետափ բնակավայրի) գլխավոր մասնագետների աշխատանքային գործառույթները նախատեսվում է կատարել առաջատար մասնագետների հաստիքներով, հաշվի առնելով վերջիններիս աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության աստիճանը: Իսկ Ոսկետափ բնակավայրի մասով բացառությունը պայմանավորված է բնակավայրի բնակչության թվով (5000 և ավելի բնակիչ):

6) Նախագծով առաջարկվող հաջորդ փոփոխությամբ նախատեսվում է Քարտուղարության և SS բաժնում (կենտրոնական ապարատ) առկա գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-17) (իրականացնում է ելից փաստաթղթերի պատրաստում) և առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-30) (իրականացնում է բնակչության ռեգիստրի վարում) հաստիքները կրճատել, իսկ առաջին կարգի մասնագետի համայնքային ծառայության պաշտոնը (ծածկագիր՝ 3.2-11) փոխարինել առաջատար մասնագետի (ՔՍԳ) պաշտոնով՝ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխությամբ պայմանավորված: Մասնավորապես, 2023 թվականի նոյեմբերի 1-ից գործարկվել է Վեդու Քաղաքացիների սպասարկման գրասենյակը (այսուհետ՝ ՔՍԳ), որտեղ ՔՍԳ-ի գործառույթներով պայմանավորված տեղակայվել են Բաժնի թվով 3 համայնքային ծառայողներ (այդ թվում նաև՝ Բաժնի պետ), որոնց կողմից չնայած կարճ ժամանակահատվածին, լիարժեք իրականացվում են Բաժնին վերապահված բոլոր գործառույթները: Հաշվի առնելով նշվածը, նախագծով առաջարկվում է բաժնի առաջատար մասնագետի համայնքային ծառայության պաշտոնը (ծածկագիր՝ 3.1-18) դարձնել գլխավոր մասնագետի պաշտոն, ով ՔՍԳ-ում իրականացնում է փաստաթղթերի մուտքագրման աշխատանքները (այդ թվում՝ բնակավայրերից ստացված): Բաժնի կրճատման ենթակա համայնքային ծառայողներին նախատեսվում է առաջարկել իրենց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

7) Նախագծով նախատեսվում է կրճատել նաև աշխատակազմի քարտուղարի ենթակայությամբ գործող առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-28) համայնքային ծառայության պաշտոնը, ում գործառույթները իրականացվելու է ՔՍԳ-ի համապատասխան աշխատակցի կողմից:

8) Նոր հաստիքացուցակում ընդգրկվել է համայնքի ղեկավարի ևս 1 օգնականի հաստիք, որով վերջինիս վերապահվելու է մամուլի քարտուղարի պարտականությունները, ինչպես նաև համայնքի ղեկավարին իրավական հարցերով խորհրդատվությունների տրամադրումը:

9) Նախագծով նախատեսվում է աշխատակազմի գործող հաստիքացուցակից հանել մշակույթի տան պատասխանատուի (գյուղերում) հաստիքները, վերջիններս նախատեսելով «Վեդի համայնքի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում:

10) Նախագծով նախատեսվում է աշխատակազմի հաստիքացուցակը համալրել «Օժանդակ բանվոր»՝ 1 հաստիքային միավորով, ով կօգնի տնտեսվարին և կգբաղվի համայնքապետարանի վարչական շենքին կից կանաչապատ տարածքի խնամքով:

<u>2. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը.</u>

Համապատասխան փոփոխությունների հիման վրա նախագծով առաջարկվում է Աշխատակազմի հաստիքացուցակի առկա 188 աշխատողների թիվը նվազեցնել 23-ով՝ սահմանելով՝ **<u>165</u>**: Ընդ որում, նախատեսվում է՝

1) **Քաղաքաշինության և հողաշինության բաժնում** մեկ գլխավոր մասնագետի հաստիքը դարձնել առաջատար, ով ՔՍԳ-ում կիրականացնի բաժնի լիազորություններից բխող համապատասխան գործառույթներ.

2) **Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժինների** միավորում՝ որպես աշխատակազմի մեկ բաժին՝ 7 հաստիքային միավորով, այդ թվում՝ բաժնի պետ, երկու գլխավոր մասնագետ և չորս

առաջատար մասնագետ, որոնք կիրականացնեն համայնքի ֆինանսատնտեսագիտական և գնումների իրականացման գործառույթներ, ինչպես նաև կօժանդակեն համայնքային ենթակայության կազմակերպությունների գնումների իրականացմանը.

3) **Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի սպասարկման և գովազդի բաժնի կրճատմամբ** բաժնի աշխատակիցներին առաջարկվելու է իրենց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

4) **Իրավաբանական բաժնի կրճատմամբ** բաժնի աշխատակիցներին առաջարկվելու է իրենց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

5) **Համայնքային ծառայության պաշտոնների** ցանկում (Աշխատակազմի քարտուղարի ենթակայությամբ գործող) նախատեսվում է ավելացնել մեկ գլխավոր մասնագետի (զարգացման ծրագրերի և ներդրումների գծով), մեկ գլխավոր մասնագետի (իրավախորհրդատու), առաջատար մասնագետի (անձնակազմի կառավարման գծով) հաստիքներ, ովքեր աշխատակազմի քարտուղարի ղեկավարության ներքո կիրականացնեն իրենց պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառույթներ:

5.1. Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինը նախատեսվում է համալրել ևս մեկ գլխավոր մասնագետի համայնքային ծառայության հաստիքով, ով կզբաղվի տեղական տուրքերի, վճարների հաշվարկմամբ և գանձմամբ, կիրականացնի առևտրի և ծառայությունների ոլորտում ՀՀ օրենսդրությամբ համայնքի տարածքում թույլտվությունների տրամադրման գործառույթները:

5.2. Քարտուղարության և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնում նախագծով առաջարկվում է Փոքր Վեդի, Ուրցաձոր, Այգավան և Տափերական բնակավայրերի վարչական ղեկավարների աշխատակազմերում առկա Քարտուղարության և ՏՏ բաժնի գլխավոր մասնագետների հաստիքները կրճատել և բաժինը համալրել նոր առաջատար մասնագետների հաստիքներով (համապատասխան բնակավայրերի համար), իսկ Ոսկետափ բնակավայրի համար գլխավոր մասնագետի հաստիքը թողնել անփոփոխ:

Բաժնի թվով մեկ գլխավոր մասնագետի (Վեդու համայնքապետարանում գործառույթներ իրականացնող) հաստիքը կրճատել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս կողմից իրականացվող գործառույթները իրականացվելու են ՔՍԳ-ի կողմից: ՔՍԳ-ում գործառույթներ իրականացնող բաժնի մասնագետների կողմից է իրականացվելու նաև Վեդի քաղաքային բնակավայրի բնակչության ռեգիստրի վարման գործառույթները, ուստի այդ հանգամանքով պայմանավորված նախատեսվում է կրճատել բաժնի առաջին կարգի մասնագետի հաստիքը, ով մինչ այդ զբաղվում էր բացառապես ռեգիստրի վարման գործառույթներով: Իսկ բաժնի առաջատար մասնագետի համայնքային ծառայության պաշտոնը կրճատել և բաժինը համալրել նոր գլխավոր մասնագետի պաշտոնով, ով ՔՍԳ-ում իրականացնելու է փաստաթղթերի մուտքագրման, թեժ գծով ստացված դիմումների (խնդիրների) մասով աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ համակարգման աշխատանքները:

Միաժամանակ, նախագծով առաջարկվում է ՔՍԳ-ում գործառույթներ իրականացնող բաժնի առաջին կարգի մասնագետի հաստիքը կրճատել և բաժինը համալրել նոր առաջատար մասնագետի (ՔՍԳ) հաստիքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս վրա է դրվելու նաև Վեդի քաղաքային բնակավայրի բնակչության ռեգիստրի վարման գործառույթները, ինչպես նաև այլ գործառույթներ, որոնք մինչ այդ իրականացվում էր աշխատակազմի քարտուղարի ենթակայությամբ գործող առաջատար մասնագետի կողմից:

6) **Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմում** նախատեսվում է ավելացնել Օժանդակ բանվորի հաստիք, ով կօգնի տնտեսվարին և կզբաղվի համայնքապետարանի վարչական շենքի հարակից կանաչապատ տարածքի բարեկարգման աշխատանքներով:

Նախագծով առաջարկվող փոփոխությունները օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրենց տեղը կգտնեն տվյալ համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում և աշխատակազմի հաստիքացուցակում, իսկ կրճատվող հաստիքները զբաղեցնող համայնքային ծառայողներին հաստիքացուցակում առկա հնարավորությունների շրջանակներում կառաջարկվի իրենց մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է՝

- ապահովել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի բնականոն և արդյունավետ ընթացքը,
- ապահովել Վեդի համայնքի բնակիչներին տրամադրվող ծառայությունների որակն ու մատչելությունը,
- ապահովել ՔՍԳ-ի արդյունավետ գործունեությունը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Վեդու համայնքապետարանի աշխատակազմի կողմից:

4. Նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N 202-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

5. Նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ Վեդի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում, իսկ աշխատավարձի հոդվածով աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված ամսական ծախսերը կնվազեն 2,740,000 դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՍԱՐԳՍՅԱՆ**